ամէն ուզածին դէմ ընելու է ։ Եւ երբ կը սկսի միտքը բացուիլ ու խօսք հասկընալ, իրեն իմացընելու է որ ծառայ, հպատակ, աղքատ, հարուստ, իշխան, ամէնքն ալ մարդ են, Աստուծոյ պատկերներն են. և ամենուն հետ ալ իրենց աստիճանին մէջ պատուով վարուելու է ։ Ուրիշի բարկանալ, զուրիշը արհամարհել մարդուս բնութեան դէմ բան է. և աշխարհքիս մէջ ամէն չարիք այս բանէն առաջ կու գայ. և թէ ազգերնուս ալ աս աստիճան խեղճութեան մէջ իյնալուն և մարդկութեան մէջ առաջ չերթալուն պատճառն ալ այս է ։

Տանուտէրը այնչափ շարժեցաւ այս խօսքերէս՝ որ առջևս առաջադրեց թէ մէյմ՚ ալ ինչ պակսութիւն որ ըլլայ տան մէջ՝ չի բարկանայ. և զանոնք տեսնելու ատեն իր պակսութիւնները յիշէ ու լռէ, ու վերջը պատշաճ կերպով դարմանն տանի. և ինծի ալ աղաչեց որ շատ անգամ տուն հանդըպիմ, ու երբ տեսնեմ զինքը կամ զուրիշը տանը մէջ՝ որ բարկութեամբ, ինքնահաւանութ՟բ, արհամարհանօք կը խօսի, չակնածեմ, յանդիմանեմ, խրատեմ, որ իր տանը մէջ այսպիսի անարգ և վնասակար կիրքը գործածող չի գտնուի ։

Հ. Գ. Մ

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### ՀՐՃԱԳԱՑՈՒԹԻՒՆ

ԵՐԻՆԴ խմուլ ողջոյն տամ ծիրանածայր պճնելոյ.
Գեղայօրէն պճնողիդ արեգականդ ողջոյն տամ.
Ողջոյն և ձեզ դաշտք կայտառք, սաւառնաձայն տիլիայք,
Եւ ձեզ ողջոյն հրճուելոցդ ոստանըստիկ պարերգուաց ։
Ողջ լեր ինձ ծիր կապուտակ, որ ծաւալիսդ անսահման
Ընդ արջնաթոյր լեռնակոյտս և ընդ կանաչ մայրեստան,
Եա և զինև, մինչ խուսեալ յարգելանէ սենեկիս՝
Դառնամ առ քեզ զուարթաբար գամ մի լինել խօսակից ։
Ապրաստափիւռ շունչ 'ի քէն հատեալ զոգիս կազդուրէ,
Եւ մետաղփեան ծագէ լոյս ականողեացս երաշտից.
Մէտ վէտ ճօճան 'ի մարմանդս երփնունակ գունոց վառք
Եւ միատարըր զուգին վայելչութիւնք զարմազանք ։
Լայնածաւալ գորգ մարգաց զիս խայտալով ընդունի՝
Ուր սողկագնացքն են շաւեղք վայրենազուարճ 'ի դալարս.
Բզզեն զինև ժիր մեղուք, և յառաւօտ կարմրորակ
Գեղապարեալ տատանին թեթևաթև թիթեռունք ։
Շողան ճաճանչք արևու, ստոյգ լռեն սօսափիւնք.
Մենակ գեղգեղք արտուտից յօդս ամբառնան սրբափայլ.
Այլ վերացեալ խաղայ հողմն յարծաթածիւղ 'ի սիզուտ,
Փուրակք մնչեն 'ի մօտուստ, կըքին կատարք լաստենեաց.
Ջրգին զինև զովաստուեր նշդարենեաց հովանոցք,
Յամպարաբոյր ծաւալմամբ փարի գիշեր անուշակ.
Ծածկի տեսիլ չինական 'ի թաքըստոց անտառաց
Եւ օճաձև ընդ շաւեղս աչք իմ բերին 'ի բարձունս.

Բեկբեկ նըշոյլք ցիր ծածան ոստոց ծածուկ ընդ ցելուած
Եւ կապուտակըն ծիծաղ՝ հազիւ ծագեն 'ի յերկնուստ:
Յանկարծ հերձեալ սաղարթուց՝ ընդ անտառին վարագոյր
Ընծայրածիր ծաւալի աչացս հանդէպ հեռաստան,
Եւ լեառն ունի կապուտակ զեգըր ոլորտից միգամած.
Ըզլեռնոտամբն 'ի խոնարհ որ մերձ ընդ մերձ գլորանի
Մանուածաւալ ընթանան դալարածին գետոյն խաղք:
Այերք անհունք 'ի ստորև, այերք անհունք 'ի վերև,
Ահիւ հայիմ անդր 'ի վեր, սոսկմամբ հայիմ այսր 'ի վայր.
Այլ ընդ բարձունս և ընդ խորս յաւիտենից միջահետ՝
Բանի շաւիղ անսայթաք ուղևորին շուարելոյ.
Աջաբեղուն գետափունք ահա ժամուն զառաջեաւ,
Մըշակապանծ պարծանօք խայտայ հովիտ արգաւու.
Եւ 'ի յօթոցըս դաշտաց դիտեն վիճակք տրոհականք
Օրս Դեմետրէ լարաձիգ հողագործաց առատրեր.
Շնորհք բարեմոյն օրհնաց մարդասիրի աստուածոյն
Յետ յաշխարհէս վաղեմի սիրոյն գնալոյ փախըստեայ:
Այլ ընդ սահմանս հեռակայ պարականոն դաշտն 'ի ձիգ
Խեղաթիւրեալ մերթ յանտառս, մերթ 'ի լերինս վերելակ՝
Չէ պայծառ պողոտայ համաշխարհաց արահետ:
Նաւատորմիղ ակաղձուն խաղայ ընդ գետն անկոհակ.
Հնչեն հօտից զանկակունք յարօտական բերկրաթունդ.
Եւ արձագանգք անդրատամն զանդէորդաց երգեցմունս:
Գեղաստանեայք գեղածիր՝ որ ըզձըրոմք են նստեալ,
Որ 'ի մայրեաց շրջապատ, որ 'ի լեռնոտըս կանգուն:
Բնակէ մարդ յանդորրու յագարակացն 'ի միջի
Եւ շինականն ըզյարկաւ պատին երկոցն անդաստանք.
Ոլթն ընտանեակ խիղըս ածէ զպատուհանաւըն ցածուն
Եւ ծառ ոստովք փարելի զտաղաւարին գգուէ զծայր:
Երանի ձեզ շինաբնակք ազատութեան անտենչիկք,
Որք համառօտ օրհնաց դաշտաց ձերոց կայք պատկառ.
Խաղաղական դարձք հնձոց փախագանաց ձեր են կէտք,
Եւ պարզունակք սահին կեանքդ ըստ վաստակոցդ օրականն:

Այլ ո՞ գչըքնաղս երևոյթ կարէ յինէն յանկարծոյն:
Ոգի եկեալ անծանօթ 'ի դաշտորայքս անծանօթ
Ընջըպետէ խուժաբար ըզմիեղէն սիրելիս.
Հաւասարին թեկն ածէ հաւասարորդ ամենայն:
Դասք դասք տոհմից զատանին, և զուգաբերձ 'ի հանդէս
Յեռեալ պանծան կըկզայօն կաղամախեաց գագաթունք.
Յամենայնի կարգք խնդրին, ընտիր խըտիր յընդհանուր.
Տողեալ դասակ ծառայից նըշանակէ ինձ ըզտէր.
Ըզնա յայտնեն 'ի հեռուստ գմբեթունակ պաղպաջունք.
Եւ 'ի վիմուտ գահաւանդ կանգնի քաղաք բըրգաբերձ.
Ի խորս թաւուց հալածին պայք և պարիկքն անտառի.
Այլ երկեղածըն պաշտօն՝ քարանց ձօնէ կեանըս վէհ:
Մերձեալ զօղի մարդ առ մարդ. նեղեալ խուռն ևս քան զևս,
Եւ յոգնեռանդըն 'ի յոգւոց յուզէն գըգիռք աշխարհի,

Նախանձընդդէմ զօրութիւնք ջեռեալ վառին 'ի գուպար.
Մեծ իրք ծնանին 'ի գոռից և մեծագոյնք 'ի հաշտից։
Բիւր շարժին ձեռք միաշունչ, ու 'ի նոյն 'ի մի վառեալ կիրս՝
Մի բաբախէ միայն սիրտ բիւրաւորաց 'ի ծոցի.
Բաղխէ 'ի սէր հայրենեաց, վառի յօրէնըս նախնեաց.
Ոսկերք նոցա նուիրականք ծածկին 'ի հողս անձկալի։
Յեթերական խորանաց իջանեն դիք յամպրամբ,
Եւ ընդ չափաւ սահմանաւ տեղիս ընտրեն պաշտամանց.
Պարգեւս ածեն տէրունիս. ըղխոփ բերէ զարօրըն
Յառաջադէմըն Դեմետր, Հերմէս ընդ իւր ըղխարխսի,
Սպանդարամետ զուռս որթոյ, ձիթենւոյ ընձիւղ Աթենաս.
Եւ Պոսիդոն ըզձագմիկն առեալ վարէ զերիվար.
Մայր Կիւբելէ առիւծունս լծեալ կառացըն քեղեաց
Յասպնջական դրունս պատուի քաղաքապահ ոստիկան։
Ի ձէնջ քարինք սրբազանք ելին դայեակք մարդկութեան.
Ծովակղզիք բացական առին օրէնս և արուեստ.
Հանդարտամուտ 'ի դրանդուղ ճառս արկանեն իմաստունք.
Դիցն ընտանեաց վրէժխնդիրք ճեպեն 'ի դաշտ դիւցազունք.
Մարք դիեցկօքն առ լոտեամք 'ի պարըսպաց կարկառեալ
Պշնուն ըզհետ բանակին ցոլայր և բիբք հատանեն.
Ո՞վ առ բագնեօք թաւալեալք աղերսարկուք առ Աստուածս՝
Փառըս մաղթեն և կորով և դարձս 'ի տուն յաղթական։
Այո՛ տուան ձեզ փառք և պանծ, այլ լոկ համբաւդ արար դարձ.
Զարի արանցըդ հռչակ՝ քարինք հնչեն սրտառուչ,
„ Թէ 'ի Սպարտա երթեալ գնաս՝ պատմեա զմէնջ ո՛ անցաւոր
„ Աստէն անկեալըս տեսեր ըստ հայրենեանն օրինաց „։
Քա՛ղցր հանգերուք սիրելիք, յարեան քաջացդ ոռոգեալ
Դալարանան ձիթենիք և սերմն ընտիր տան յերկիր։
Վառի աշխոյժ պայազատ ազատական արուեստից.
Եւ 'ի շամբիցըն մօրից ոգնարկէ դիք խաժագոյն.
Ճըչէ փայտատ 'ի մայրին, Դրիադք դրդեալ հառաչեն,
Թաւալգլոր կոճղ 'ի լեռնէ չկահեալ բերի վարակոտ.
Դահավիժին քարաժեռք ընդոստուցեալք միձահար.
Մարոստանիկն իջանէ 'ի լեռնախորս խառոչաց.
Ի կռանակոփ հարուածոց դըրընչին սալք դարբնականք
Եւ ընդ կարշնեղ դաստակօք ցայտեն շանթիք կայծականց։
Մուշ ոսկեփայլ վառվառեալ փարի զշըջուն իլիկաւ,
Եւ ձըգանօք կանեփոյ ճռնչեալ շարժի նաւափայտ.
Ի պաղպաջանց ծովափին ձայն արկանէ նաւուղիղ.
Յաշխարհ հեռի խաղան նաւք տանել ըզբերս հայրենի.
Այլք զաւետիս տան դարձի աղխամաղխօք տարաշխարհ՝
Ի բարձրաբերձ կայմից ծայրս հանեալ պըսակ տօնական։
Խռնին փողոցք վաճառուց, կենդանանան հրապարակք։
Ընդարմանոյ ունկն 'ի լուր բազմալեզու բարբառոց.
Զարդիւնս երկրի մթերէ վաճառական 'ի համբարս,
Զո՛ր տապագնացն հայթհայթէ Լիբէաստան արգասիս,
Զո՛ր Արուայիկք ստոյգանեն և զոր Թուլէ հեռաձայր.
Ամենազանըն բարեօք գեղու եղջիւր Ամալթեայ։

Յայնժամ մանկունս աստուածեանըս բաղձք շնորհեն համձարոյ.
Ազատասուն յօրացեալ բարգաւաճեն և արուեստք.
Կենդանատիպ պատկերօք զօշոտեն զաչըս ճարտարք,
Եւ 'ի կոփչոյ հոգեզգեաց խօսի արձան ըզգայուն.
Ի սիւնս յոնեան նազենիս երկինք հանգչին ձեռագործք,
Եւ զՄիլիւմպոս համօրէն յինքեան բերէ Պանթէոն.
Թեւթեւաճախր իբր Իախս, իբրև փրքին եզոզին
Վերայ գետոց ուղխահոս լուծք արկանին կամրջաց.
Յառանձնութեան անըզգաղ նստեալ նիւթէ իմաստուն
Նըշանականս ածէ ծիրս, սըրէ զհանճար հետազօտ.
Փորձէ զնիւթոյ զօրութիւն, ըզսէր և զհեռ մագնեսեայ.
Ջայնից ընդ օդ հետահամ՝ լուսոյ լինի ընդ եթերս.
Խնդրէ զօրէնըս թագունս անկարծ հրաշլոյն ահարկուաց,
Եւ ըզբևեռն հանդարտիկ՝ փախստական յերևոյթ:
Գիր՝ անմռունչ անդամնոց զգեցուցանէ ձայն ու իրան,
Եւ թերթ խօսուն՝ հանէ զնա բազմադարեան ընդ հեղեղ.
Մոլորական մերժին մէգք յաչաց յապուշ կըրթելոց,
Եւ 'ի լուսոյ տըւընջեան հալածին ցնորք ցայգականք.
Մարդ ըզշըղթայս իւր խըզէ. և երանի թէ խըզեալ
Յանձնէ զկապանս երկեղի՝ պահէր ըզսանձս ամօթոյ.
Ազատութիւն գոչէ Ռամն, ազատութիւն՝ իղձք մոլեալք,
Եւ խրամատեալ ըզբնութիւն վազեն 'ի դուրս համարձակ.
Յայնժամ շըրթէ զխարիսխն, ա՜հ, իւ կայր յախուռս յանկասկած,
Եւ մըռընչեալ 'ի մըրրկին կործեալ վարէ զնա հեղեղ,
Խաղացուցեալ տամ՝ 'ի խորս, թաղուցանէ զշըրջափուլս.
Օրփեալ կոծի նաւն անկայմ 'ի լեռնացեալ մըկանունս.
Աստեղք ալեաց օժանդակք՝ յամպըս ղուղին խաւարինս,
Ոչինչ ոչ կայ 'ի կայի և ոչ աստուած իսկ յօգուշ:
Ճշմարտութիւն 'ի բանից, հաւատք և ուխտք 'ի կենաց,
Երդումն անգամ 'ի շըթունս՝ 'ի սուտ փոխեալ՝ պակասեն.
Ի կապ սրտից սերտագոյն և 'ի սիրոյն թաքնարան
Վարհեալ մըխի քըսմըստ, քեցէ զմնեբիմ 'ի մռերմէ.
Գոժնէհայեաց մասնութիւն զանմեղութիւն յաչաղէ.
Վանիս սըրէ մահածուս զըպարտութիւն հայհոյիչ.
Խորհուրդս երկնեն լըբենիս որոց ոգիք ամպարիշտք.
Եւ սէր զազնիւ մուսնայ զաստուածաշնորհն իմացմունս.
Կեղծեալ 'ի քօղ երևոյթ, Ճշմարտութիւն սըբազան,
Պղծէ ժըպիրհ սըտութիւն ըզմեծարոյ ձայն բնութեան՝
Որ սիրտք հայցեն անձկանօք 'ի բերկրանացն ըզմայլմունս.
Հազիւ զգայուածք Ճշմարիտ երևեսցին 'ի լռութեան.
Գովլին յատեանս իրաւունք, 'ի տաղաւարս՝ միութիւն,
Եւ ուրուականք օրինաց՝ կան առ գահոյլ արքայից.
Կալով կայցէ ամն և դարս մեռելոտին այն դիմակ
Եւ խաբուսիկըն պատկեր կենդանութեան թևարկու,
Մինչև բնութեան զարթուցեալ հուժկու ձեռամբն երկաթեաւ
Ի գոգաւորըն փակի յուզեսցէ զհարկ ու ամնակ.
Նմանեալ վազեր որ 'ի յուշ նումիդականն անտառաց
Յեղակարծոյն մռնչեսցէ զխաղխամ երկաթ գայռազըլին,

Եւ մարդկութիւն յարեցէ 'ի վիշտ 'ի վրէժ զայրացկոտ
Եւ 'ի յաձիւնս քաղաքի խնդրեսցէ զհետըս բնութեան ։
Բացէք պատուարք, բացէք արդ, զարգելական ձեր թողէք
Ազատաձեմ դարձ առնել 'ի դաշտավայրս զոր էլէք ։

Բայց ո՞ւր կամ ես ։ — Հետք ջնջին . և ընդ երկիր առապար
Վիհք յառաջոյ խոչ ընդ ոտըն լինին, վիհք 'ի թիկանց .
Համաստրիմք կան ընկերք ինձ յետուստ պրակք և պարտէզք,
Եւ ամենայնք 'ի յետուստ նշխարք մարդկան շինուածոց .
Նիւթոյ ևեթ դիտեմ կոյտ, յորմէ կենաց ընձուի ծայր,
Եւ ձևողին ձեռին ակն ունի պաղպաջ անյարդար ։
Ընդ քարաժեռս հերձակտուր ժողխեալ ուղխից վիժանուտ
Ընդր ընդ ծառոց արմատովք զանցին գործեն զուրեանց հուն,
Այտ ամենայն ինչ խրթնի և անապատ ահաւոր .
Ալացեալ արծուոյն յօդ թափուր՝ յամպոց փարի զաշխարհաւ .
Ոչ մի հողմոյ թև թեթև ածէ ինձ անդր 'ի բարձունս
Օ հետախաղաղ աղաղակ մարդկան խնդից կամ ցաւոց ։
Այցեմ ըստոյգ միայնակ ։ — Ի գիրկ ու 'ի ծոց քո բնութիւն,
Ի քեզ կամ ես . լոկ անուրջք զահի հարեալ տարան զիս .
Արդ ընդ կենաց մռայլ պատկերս ընդ մռայլս հովտաց հերք° 'ի բաց ։
Սրբիկ բառնամ ես ըզկեանս 'ի սրբափայլ սեղանոյդ,
Օ յուսապատար մանկութեան բառնամ զըւարթ քաջալերս ։
Ընդու փոխեն 'ի մեզ կամք ըզնըպատակ և ըզկարգ,
Ընդու 'ի նոր կերպարան յեղափոխին և արարք .
Դու միայն միշտ մանկադեմ միտանորոգ դու գեղով
Ըզգօն բնութիւն՝ կաս պատկառ յաւիտենիցն օրինաց .
Միշտ նոյն գոլով քո պահես հաւատարիմ առ մարդիկ
Օր քեզ տըղայն յեղյեղուկ զոր 'ըիտասարդն հաւատաց .
Ի նոյն 'ի ծոց գըլթալից գըգուես զհասակս ամենայն ։
Ընդ նովին ծրիւ կապուտաւ ու 'ի նոյն կանաչ 'ի գետին
Նորոյ ազգաց երթևեկք՝ մերձին ազգացն անցելոց .
Եւ արեգակն Հոմերի ահա ժպտի և ըզմեզ ։

ՇԻԼԼԵՌ

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Ազգային տպագրութեան սկզբնաւորութեանը և յառաջանալուն պատմութիւնը [1] ։

ՎԵՆԵՏԻԿ քաղաքին մէջ հայագիր տպագրութեանց վրայ գլխաւոր աշխատողներէն մէկը սեպելու է երևանեցի Համազասպեան Թադէոս երէցը, Ճաշոց գրքին ըրած ընտիր և վայելչազարդ տպագրութեանը համար . և իրեն արդիւնքը այնչափ աւելի մեծ է, որչափ մեծ էր ձեռք զարկած գործքը թէ աշխատանքին և թէ տպագրութեան պէտք եղած ծախքին համար ։ Իրեն խորհրդոցը և ջանից համամիտ և օգնական տեսնելով Եղիազար կաթուղիկոսը, Սպահանէն ելաւ ու Դաղզիոյ Մարսիլիա քաղաքը անցաւ, ուր որ Ոսկան վարդապետին տպագրատունը կար, և տեսնելով որ անխնամ թողուեր ու գրեթէ կոր-

[1] Տես Բազմ. հտ. Ը. երես 230 . 344 ։